ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Մարտունի,
Շահումյան 2, Հեռ. 0262-40005

N 295

16 հունիսի 2016թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գրիգորյան.

Ձեզ է ուղարկվում Մարտունի համայնքի ավագանու 15.06.2016թ. նիստի արձանագրությունը և որոշումները:

Առդիր՝ 15 թերթ:

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գ. Ոսկանյան
4-11-56

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ – 07

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15-Ը ՀՈՒՆԻՍԻ 2016 Թ. ԹԻՎ 07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ:

Նիստին մասնակցում էին համայնքի 10 ավագանիներից 8-ը Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Խ. ԴԱՎԹՅԱՆ Ա. ՄՈՍՈՅԱՆ, Ա.ՄԵԼԻՔՅԱՆ, Ա. ԶԻՐՈՅԱՆ, Վ. ՄՀԵՐՅԱՆ, Ե.ԴԱՎԹՅԱՆ:

Նիստը վարում էր քաղաքապետ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Քարտուղարությամբ՝ Գ. ՈՍԿԱՆՅԱՆԻ.

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

ՀԱՐՑ-61. <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Գարեգին Նժդեհի անվան մանկապատանեկան կենտրոն>> ՀՈԱԿ-ը լուծարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-62. <<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-63. <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Գարեգին Նժդեհի անվան մանկապատանեկան կենտրոն> ՀՈԱԿ-ի շենքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին <<Հայորդաց տուն>> բացելու համար անհատույց անժամկետ օգտագործման տրամադրելու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-64. <<Մարտունի քաղաքի բնակիչ Հրաչիկ Կարապետյանին 9,323 հա մակերեսով վարձակալությամբ հանձնված 05-003-0529-0038 ծածկագրով հողամասը սեփականության իրավունքով ուղղակի վաճառքով օտարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-65. <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ-66. «Մարտունի համայնքի 2016 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշումը:

ՀԱՐՑ- 67. <<Դիմումների քննարկում>>:

Մարտունի համայնքի ավագանին որոշեց հաստատել նիստի օրակարգը՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Հարցը քվեարկվեց, կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա.ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Վ.ՄՀԵՐՅԱՆ

Ե.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 61

«15»-ը հունիսի 2016թ. *ք. Մարտունի*

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Գարեգին Նժդեհի անվան մանկապատանեկան կենտրոն>> ՀՈԱԿ-ը լուծարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Նկատի ունենալով, որ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Գարեգին Նժդեհի անվան մանկապատանեկան կենտրոն>> ՀՈԱԿ-ի շենքը ունի փայտե ծածկ, սենյակների կառուցվածքը չի համապատասխանում գործող խմբերի նորմալ ուսուցման պրոցես իրականացնելուն, շենքը կարիք ունի կապիտալ վերանորոգման, գործող խմբերը նպատակահարմար է տեղափոխել Մարտունու մշակույթի տուն, որի շենքային պայմանները լիովին բավարարում են թե մշակույթի տանը, թե մանկապատանեկան կենտրոնում գործող խմբերի պարապմունքների նորմալ կազմակերպմանը, իսկ մանկապատանեկան կենտրոնի շենքը նպատակահարմար է օգտագործել որպես Հայորդաց տուն, որի հիմնադիր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը պատրաստվում է հիմնովին վերանորոգել շենքը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համաձայնություն տալ լուծարելու <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Գարեգին Նժդեհի անվան մանկապատանեկան կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:

2.<<ՀՀ Գեղարունիքի մարզի Մարտունի քաղաքի Գարեգին Նժդեհի անվան մանկապատանեկան կենտրոն>> ՀՈԱԿ-ի նմանատիպ խմբերը միավորել Մարտունու մշակույթի տանը գործող խմբերի հետ:

3.ՀՈԱԿ-ի շենքը անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Հայորդաց տուն հիմնելու համար:

4.Շենքը հատկացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Հայորդաց տան կանոնադրական նպատակների լիարժեք իրականացման, համայնքի բնակիչների երեխաների հոգևոր և ֆիզիկական դաստիարակության, մանկապատանեկան կենտրոնում գործող ռազմահայրենասիրական, ազգային նվագարանների, երգ ու պարի, օտար լեզուների, գորգագործության, ժանյակագործության, թատերական, շախմատի խմբակների բնականոն գործունեությունը ապահովելու պայմանով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա.ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Վ.ՄՀԵՐՅԱՆ

Ե.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 62

«15»-ը հունիսի 2016թ. *ք. Մարտունի*

<<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին>> ավագանու որոշումը:

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի <<Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին >> թիվ 1851-Ն որոշման

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը (հետագայում չափագրելու, ճշգրտելու պայմանով) սեփականության իրավունքով անհատույց հանձնել <<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը (ցանկը կցվում է):

2.1 Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծակքարի աղբյուրների համակարգեր, կոյուղու մաքրման կայան իր էլ. ենթակայանով

Գույքի ծածկագիրն է՝

Գույքի մակերեսը՝

Գույքի նպատակային նշանակությունը՝

Հողամասի գործառնական նշանակությունը՝

2.2 Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծակքարի աղբյուրների համակարգեր, ՕՋԿ №1

Գույքի ծածկագիրն է՝ 03-005-0134-0002

Գույքի մակերեսը՝ 689,06քմ

Գույքի նպատակային նշանակությունը՝ արտադրական

Հողամասի գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների

2.3 Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծակքարի աղբյուրների համակարգեր, ՕՋԿ №2

Գույքի ծածկագիրն է՝ 03-005-0134-0002

Գույքի մակերեսը՝ 689,06քմ

Գույքի նպատակային նշանակությունը՝ արտադրական

Հողամասի գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների

2.4 Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Բրսեի աղբյուրների համակարգեր, Բրսեի աղբյուրների կապտաժ

Գույքի ծածկագիրն է՝

Գույքի մակերեսը՝

Գույքի նպատակային նշանակությունը՝

Հողամասի գործառնական նշանակությունը:

2.5 Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Բրսեի աղբյուրների համակարգեր, կապտաժ

Գույքի ծածկագիրն է՝

Գույքի մակերեսը՝

Գույքի նպատակային նշանակությունը՝

Հողամասի գործառնական նշանակությունը:

2.6 Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Բրսեի աղբյուրների համակարգեր,պոմպակայան 2 հատ

Գույքի ծածկագիրն է՝

Գույքի մակերեսը՝

Գույքի նպատակային նշանակությունը՝

Հողամասի գործառնական նշանակությունը:

2.7 Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Հոպոյի-վար աղբյուրների համակարգեր, քլորակայան Հոպոյի վար:

Գույքի ծածկագիրն է՝

Գույքի մակերեսը՝

Գույքի նպատակային նշանակությունը՝

Հողամասի գործառնական նշանակությունը:

3.Որոշման 2-րդ կետում նշված գույքերի նվիրատվության պայմանագիրը կնքել ստորև նշված պայմանների առկայության դեպքում:

1.Գույքը պետական սեփականությունից մասնավոր ֆիզիկական կամ իրավաբանական անձանց օտարելու բացառում:

2.Մարտունի քաղաքի այն հատվածներում, որտեղ բացակայում են ջրագծերը և կոյուղագծերը, դրանց կառուցում:

3.Քաղաքապետարանի և քաղաքապետարանի ենթակա կառույցների անվճար ջրամատակարարման և ջրահեռացման ապահովում ամսական 10,000 -ական դրամի չափով:

4.Անվճար ջրամատակարարում և ջրահեռացում ապահովել քաղաքի կենտրոնական զբոսայգու և հրապարակի շատրվաններին, շուրջ 20 ցայտաղբյուրներին, 2 հանդամասերում գտնվող խմոցներին, որոնք կրում են սեզոնային բնույթ:

5.<<Բրսեյ աղբյուր>> կապտաժի վերանորոգում և ավելցուկ ջրի ճիշտ օգտագործում:

6.Հոպոյ –վար ջրատարի և կոպտաժների վերանորոգում:

7.Ասֆալտապատ և խճապատ փողոցները վթարավերականգնման աշխատանքներից հետո նախնական տեսքի բերում:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 6

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա.ՄՈՍՈՅԱՆ

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Գ.ՄՇԵՐՅԱՆ

դեմ՝ 1 – Արտակ Զիրոյան

ձեռնպահ՝ 1- Եղիազար Դավթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 63

«15»-ը հունիսի 2016թ. *ք. Մարտունի*

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Գարեգին Նժդեհի անվան մանկապատանեկան կենտրոն> ՀՈԱԿ-ի շենքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին <<Հայորդաց տուն>> բացելու համար անհատույց անժամկետ օգտագործման տրամադրելու մասին>> ավագանու որոշումը:

Մարտունի քաղաքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից <<Հայորդաց տուն>> բացելու անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գեղարքունյաց թեմի Առաջնորդական տեղապահի և Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի գրությունները

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համաձայնություն տալ ք. Մարտունի, Մյասնիկյան փ. 37 հասցեում գտնվող <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Գարեգին Նժդեհի անվան մանկապատանեկան կենտրոն>> ՀՈԱԿ-ի շենքը անհատույց անժամկետ օգտագործման տրամադրել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին <<Հայորդաց տուն>> հիմնելու համար:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա.ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Վ.ՄՀԵՐՅԱՆ
Ե.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 64

«15»-ը հունիսի 2016թ. *ք. Մարտունի*

<<Մարտունի քաղաքի բնակիչ Հրաչիկ Կարապետյանին 9,323 հա մակերեսով վարձակալությամբ հանձնված 05-003-0529-0038 ծածկագրով հողամասը սեփականության իրավունքով ուղղակի վաճառքով օտարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Նկատի ունենալով Մարտունի քաղաքի Կամոյի փողոցից դեպի հյուսիս ընկած Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող ճահճային հողատարածքի չորացման անհրաժեշտությունը, այդ տարածքի բարեկարգման ծախսատարությունը, կառուցապատման կարևորությունը, տարածքի վարձակալ Հրաչիկ Կարապետյանի պատրաստակամությունը տարածքը բարեկարգ վիճակի բերելու համար և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 627 հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Համաձայնություն տալ Մարտունի քաղաքի Կամոյի փողոցից դեպի հյուսիս ընկած Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող Հրաչիկ Կարապետյանի կողմից վարձակալած 15,7 հա հողամասից 9,323 հա մակերեսով հողատարածքը ուղղակի վաճառքով օտարել Հրաչիկ Կարապետյանին:

2.Հողատարածքը վաճառել 93230քմ x 342 = 31884660 (երեսունմեկ միլիոն ութ հարյուր ութսունչորս հազար վեց հարյուր վաթսուն) դրամով:

3.Պահանջել Հրաչիկ Կարապետյանից տարածքին օգտագործել իր կողմից ներկայացված բիզնես ծրագրին համապատասխան:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա.ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Վ.ՄՀԵՐՅԱՆ

դեմ 1 – Եղիազար Դավթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 65

«15»-ը հունիսի 2016թ. *ք. Մարտունի*

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին>> ավագանու որոշումը:

Հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 30.05.2016թ. №01/10/2082 գրությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի հողային հաշվեկշիռը (կից ներկայացվում է):

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Խ. ԴԱՎԹՅԱՆ
Ա.ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՋԻՐՈՅԱՆ
Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Վ.ՄՀԵՐՅԱՆ
Ե.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 66

«15»-ը հունիսի 2016թ. *ք. Մարտունի*

«Մարտունի համայնքի 2016թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի, 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Մարտունի համայնքի 2016թվականի բյուջեի պահուստային ֆոնդից6536400(Վեց միլիոն հինգ հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ տեղափոխել՝

ա/«Ճանապարհային տրանսպորտ» նախահաշվի 4239 հոդված-600000(վեց հարյուր հազար)ՀՀ դրամ՝Մարտունի քաղաքի փողոցների խճապատման նպատակով <<Մարտունու կոմունալ սպասարկում և բարեկարգում>> ՀՈԱԿ-ից գնում կատարելու համար:

բ/«Սպորտային միջոցառումներ» նախահաշվի 4267 հոդված-1600000մեկ միլիոն վեց հարյուր հազար հազար)ՀՀ դրամ <<ՄԵՎԱՆԱ ԼԻՃ-2016>>շախմատի միջազգային մրցաշարի մասնակիցներին հուշամեդալներ,նվերներ և հյուրասիրության համար սննդի գնման համար:

գ/« Հանգիստ, մշակույթ,կրոն» նահահաշվի 4819 հոդված-4000000 (չորս միլիոն)դրամ՝ՀՀ <<Մարտունու Սուրբ Աստվածածին եկեղեցի>> նիմնադրամին նվիրաբերելու նպատակով:

ե/ <<Մարտունու մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի 4511 հոդված234600 (երկու հարյուր երեսունչորս հազար վեց հարյուր)ՀՀդրամ՝ շախմատի մրցաշարի կապակցությամբ գույք գնելու համար:

է/ <<Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ>>նախահաշվի 4239 հոդված 100000/մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ փաստաբանական ծառայության գնման նպատակով:

2. Մարտունի համայնքի 2016 թվականի բյուջեի ֆոնդային մասի <<Օրենսդիր,գործադիր մարմիններ,պետական կառավարում>>նախահաշվի 5113 հոդվածից 2400000/երկու միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ տեղափոխել՝

ա/<<Ճանապարհային տրանսպորտ>> նախահաշվի 5113 հոդված՝1200000/մեկ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ՝<<Նորհայր և Անդրանիկ>>ՍՊԸ-ից լրացուցիչ գնում կատարելու նպատակով:

բ/<<Ճանապարհային տրանսպորտ>> նախահաշվի 5134 հոդված՝1200000/մեկ միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ՝<<նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրման համար:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա.ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՋԻՐՈՅԱՆ

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Վ.ՄՀԵՐՅԱՆ

Ե.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 67

«15»-ը հունիսի 2016թ. *ք. Մարտունի*

<<Դիմումների քննարկում>>:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Համաձայնություն տալ Մարտունի քաղաքի սոցիալապես շատ ծանր վիճակում գտնվող ներքոնշված քաղաքացիներին 340000 (երեք հարյուր քառասուն հազար) դրամ ՀՀ դրամ օգնություն տրամադրելու համար:

Հ/Հ	Անուն,ազգանուն, հայրանուն	Գումարը
1	*Սարգսյան Սուրիա Գևորգի*	*10000*
2	*Սիմոնյան Սարիբեկ Արտաշի*	*10000*
3	*Սինանյան Նելլի*	*20000*
4	*Գրեյան Անահիտ*	*10000*
5	*Սահակյան Լուսինե Ռադիկի*	*20000*
6	*Եղոյան Արմեն Սերյոժայի*	*20000*
7	*Եղոյան Աշխենիկ Ռուբենի*	*20000*
8	*Սարգսյան Օֆիկ Աբգարի*	*20000*
9	*Պետրոսյան Արթուր Վոլոդիայի*	*20000*
10	*Մկրտչյան Վարդգես Գետևոնի*	*15000*

11	Երոյան Սերգո Ալբերտի	50000
12	Աղիլխանյան Խանդութ Կորյունի	15000
13	Միերյան Արմինե Մայիսի	15000
14	Գրիգորյան Մարո Արտուշի	15000
15	Այվազյան Սոնա Ազատի	15000
16	Առաքելյան Արամ Աշոտի	25000
17	Խլղաթյան Գրիգոր Խաչիկի	20000
18	Մանուկյան Սամվել Ազարետի	20000
Ընդամենը 340000(երեք հարյուր քառասուն հազար) դրամ		

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 8, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝

Խ. ԴԱՎԹՅԱՆ

Ա.ՄՈՍՈՅԱՆ

Ա. ԶԻՐՈՅԱՆ

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Վ.ՄՀԵՐՅԱՆ

Ե.ԴԱՎԹՅԱՆ